

Բիզնես վարկ **cashback**-ով

EDRD-ի հետ համագործակցության շրջանակում բիզնես վարկերը տրամադրվում են 1մլն – 1մլդ ՀՀ դրամ մինչև 35% **cashback**-ի հնարավորությամբ:

ՎՋԵԲ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՓՄՁ-ՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ	
1վարկի/լիզինգի նվազագույն/առավելագույն գումար	1մլն – 1մլդ ՀՀ դրամ
Թիրախային ընկերությունների սեգմենտ և նպատակ	Վերականգնվող էներգիայի, էներգոարդյունավետության, «կանաչ» կառուցապատման, էլեկտրական փոխադրամիջոցների, բնական պաշարների կայուն օգտագործման նպատակով ներդրումներ իրականացնող, փոքր և միջին ձեռնարկություններ ¹ : Վարկը տրամադրվում է կապիտալ ներդրումներ կատարելու նպատակով ² :
Վարկառու	ՀՀ տարածքում գրանցված և գործունեություն իրականացնող փոքր ու միջին ձեռնարկություններ
Վարկի նպատակը	Հիմնական միջոցների (տրանսպորտային միջոցների, սարքավորումների, գյուղատնտեսական տեխնիկային և սարքավորումների) ձեռքբերում,*

¹ Համաձայն ԵՄ դասակարգիչի

² Հնարավոր է ֆինանսավորել մինչև 30%-ի չափով շրջանառու միջոցներ, որոնք անմիջական կապ ունեն ֆինանսավորվող կապիտալ ներդրումների հետ

	• Շինարարական աշխատանքների իրականացում (բացառությամբ բազմաբնակարան շենքերի)
Վարկի տարեկան տոկոսադրույք	13.5% - 14.0% ՀՀ դրամ
Վարկի մարման ժամկետ	24-60 ամիս
Արտոնյալ ժամկետ	6 ամիս
Հետվճարի չափ	Վարկի գումարի մինչև 15%-ի չափով
Հավելյալ հետվճարի չափ	• 20%, եթե վարկառուն Արցախի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն է տեղափոխվել 2020 թ-ի սեպտեմբերի 27-ից մինչև 2023 թ-ի սեպտեմբերի 23-ն ընկած ժամանակա-հատվածում և ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով կարող է համարվել տեղահանվածների աջակցության որևէ ծրագրի շահառու («տեղահանվածներ»), • 15%, բայց ոչ ավել, քան 60,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, եթե առնվազն վերջին 6 ամսվա ընթացքում վարկառուի գրանցված աշխատակիցների նվազագույնը 10%-ը կամ 10 անձը (հիմք է ընդունվում երկուսից նվազագույնը) հանդիսանում է «տեղահանվածներ»
Հատուկ նշումներ	1. Ներդրումների առնվազն 70%-ը պետք է ունենան էներգախնայողության բաղադրիչ 2. Ծրագրի շրջանակներում ֆինանսավորման ենթակա չեն հողի գնումը, հանքաարդյունաբերության և ճանապահաշինարարության ոլորտում ներդրումները, հարկերի վճարումը, ֆինանսական և ապահովագրական կազմակերպությունների վարկավորումը, կարճաժամկետ ներդրումները անշարժ գույքի ոլորտում (օրինակ բնակելի կառուցապատումը, վերաֆինանսավորումները), ՀՀ տարածքից դուրս ներդրումները,

	3. Այս ծրագիրը համատեղելի է ՀՀ պետական սուբսիդավորման ծրագրերի հետ
Տրամադրման միջնորդավճար	0.5%, նվազագույնը 50,000 դրամ,
Վաղաժամկետ մարման տույժ	Վաղաժամկետ մարվող գումարի 5%-ը (0%, եթե վաղաժամկետ մարումը կատարվում է ստացված դրամաշնորհի միջոցներից)
Լիզինգային ֆինանսավորման դեպքում կանխավճարի չափ	Նվազագույնը լիզինգի առարկայի արժեքի 20% (լիզինգի կանխավճարի ապահովագրության դեպքում, կանխավճարի չափը կարող է սահմանվել 0%)

**ԵՄ-ից դուրս արտադրված սարքավորումների համար անհրաժեշտ է CE սերտիֆիկատ:*

Ծրագրի պայմանների վերաբերյալ մանրամասները՝ <https://www.eu4business-ebrdcreditline.am/hy/>